ԱՆԱՀԻՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

***Երաժշտագետ-ֆոլկլորագետ,***
***Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ***
E-mail: anki.mus@mail.ru
Doi:10.58580/18290019-2022.1.62-34

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Նունե Ռոմեոի Աթանասյան՝ 30.9.2022 թ.,
ընդունվել է տպագրության՝ 2.10.2022 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 1.9.2022 թ.

# *Սրտի խոսք՝ ուսուցչիս*

***Ամփոփում***

*Այս փոքրիկ հոդվածը նվիրված է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, երաժշտագետ-ֆոլկլորագետ, արվեստագիտության թեկնածու Մարգարիտ Արամի Բրուտյանի 100–ամյակին (1922-2002 թթ.): Ավելին՝ սիրելի ուսուցչին ուղղված սրտի խոսք, նրա մեծ վաստակի գնահատման համառոտ փորձ և հիշատակը վառ պահելու մեծ ցանկություն:*

***Բանալի-բառեր.*** *Մարգարիտ Բրուտյանի 100–ամյակ, Հայ ժողովրդական ստեղծագործության կաբինետ, Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոն, Կոմիտաս թանգարան-ինստիտուտ, Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական, Արշակ Բրուտյան, Քրիստափոր Քուշնարյան:*

***Abstract***

*Musicologist-folklorist, Associate professor at YSC* ***Anahit Artavazd Kirakosyan*** *- **"My heart's Word to My Teacher "** - This short article is dedicated to the 100th anniversary of Margarit Aram Brutyan (19222002), Professor at Yerevan Komitas State Conservatory, musicologist-folklorist, PhD in Arts. Moreover, a word from the heart addressed to the beloved teacher, a brief attempt to appreciate her great merit and a great desire to keep her memory alive.*

***Key Words:*** *Margarit Brutyans 100th anniversary, Cabinet of Armenian Folk Art, Department of Armenian Musical Folklore Studies, Komitas Museum-Institute, Gyumri-Alexandrapol-Leninakan, Arshak Brutyan, Kristapor Kushnaryan.*

***Абстракт***

*Музыковед-фольклорист, доцент ЕГК* ***Анаит Артаваздовна Киракосян.*** *- **"От всего сердца - учителю ".***
*Статья посвящена 100-летию со дня рождения профессора Ереванской государственной консерватории им.Комитаса, музыковеда-фольклориста, кандидата искусствоведения Маргарит Арамовны Брутян (1922-2002). Слово - посвящение любимому педагогу в память о ее многогранной плодотворной деятельности.*

***Ключевые слова:*** *100-летие Маргарит Брутян, кабинет народного творчества, кафедра армянской музыкальной фольклористики, Музей-институт Комитаса, Гюмри-Александрополь-Ленинакан, Аршак Брутян, Христофор Кушнарян.*

*Այս ամբողջ տարին մենք նվիրել ենք մեր սիրելի ուսուցչին՝ հայ ժողովրդի ազնիվ զավակներից մեկին Մարգարիտ Արամի Բրուտյանին (1922-2002), որպես հայ մշակույթի իսկական և ակտիվ գործիչ (ցավոք՝ առանց պաշտոնական կոչման): Նա ճանաչված ու սիրված էր, հայտնի ոչ միայն Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, այլև խորհրդային երաժշտագիտության, հատկապես՝ֆոլկլորագիտության բնագավառում:*

*Իմ սիրելի ուսուցիչն արմատներով, ուղն ու ծուծով, ինչու չէ՝ համ ու հոտով իսկական գյումրեցի էր, մտավոր-*

*րական գյումրեցի, XX դարասկզբի Ալեքսանդրապոլ-Լենինականի հայտնի Բրուտյանների (Բրտյան) գերդաստանի շնորհալի շառավիղ: Իր պապի Գյումրիում հայտնի արվեստագետ երաժիշտ-բանահավաք, խմբավար, նկարիչ, մանկավարժ և երաժշտահասարակական գործիչ Արշակ Բրուտյանի արժանավոր հետնորդ: Պատահական չէր, որ քույր ու եղբայր, պրո-*

*ֆեսորներ Մարգո և Լևոն Բրուտյանները պապից ժառանգած հմտություններն և ունակություններն անմնացորդ ներդրեցին կոնսերվատորիայի կրթական համակարգի կառուցման գործում:*

***Ալինա Աշոտի Փահլևանյան, Անահիտ Արտավազդի Կիրակոսյան, Մարգարիտ և Լևոն Արամի Բրուտյաններ (1997 թ.)***

***Alina A.Pakhlevanyan, Anahit A.Kirakosyan, Margarit A.and Levon A.Brutyan (1997)***

***Алина Ашотовна Пахлеванян, Анаит Артаваздовна Киракосян, Маргарит Арамовна и Левон Арамович Брутяны (1997)***

*Այսօր նույնիսկ դժվար է պատկերացնել Կոմիտասի անունը կրող ԲՈՒՀ-ն առանց այն ազգային օղակի, որի հիմնադիրը եղավ Մարգո Բրուտյանը: Դա 1969 թվականին էր. Կոմիտասի ծննդյան 100-ամյակի օրերին նա մեծ ջանքերով հիմնեց ազգային փոքրիկ Կաբինետ (ամբողջական անունը՝ Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության կաբինետ), որն ի դեպ, 2003-ից պաշտոնապես կրում է իր հիմնադրի անունը (հաստատագրված է հուշատախտակով):*

*Բայց դա բավարար չէր. նա մտածում էր ֆոլկլորի ամբիոն ստեղծելու մասին: Նրան հանգիստ չէր տալիս այն «տհաճ» փաստը, որ Կոմիտասի երազած երաժշտանոցում բազմատեսակ ամբիոնների շարքում բացակայում է ամենակարևոր օղակը՝ ազգայինը: Վերջապես, 1989-ին Կաբինետը վերածեց Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի: Այդպիսով, կոնսերվատորիայի կրթական համակարգում Մարգո Արամովնայի շնորհիվ դրվեց ազգային համալիր կրթության ամուր և գիտական հիմքը:*

*Նրա մտահղացումները շատ էին, բայց դրանցից երեքը ամենակարևորն էին.*

*ա) ազգային դասընթացների դասավանդում,*

*բ) ժողովրդական երգերի հավաքման գիտարշավներ Հայաստանի տարբեր շրջաններում և նրա սահմաններից դուրս,*

*գ) երգերի նոտագրում և ժողովածուների հրատարակում:*

*Այս ամենը և նույնիսկ ավելին, թե՛ իր օրոք, թե հետագայում ամբիոնի շնորհիվ իրականություն դարձավ (Մ. Բրուտյանից հետո երկար տարիներ ամբիոնը ղեկավարել է պրոֆեսոր Ալինա Փահլևանյանը, ներկայումս դոցենտ Նունե Աթանասյանը):*

*Իսկ նրա սաներից շատերն, այդ թվում նաև ես, ավարտեցին հենց ի՛ր մասնագիտական դասարանը՝ իբրև ֆոլկլորագետներ և այսօր էլ շարունակում են գործել իրենց ուսուցչի ծավալուն գործունեության այս կամ այն ոլորտում:*

*Պետք է նշել, որ իր սաների նկատմամբ թեև խստապահանջ էր, բայց միաժամանակ՝ մարդկայնորեն շատ ջերմ: Շատերի համար նա ոչ միայն դեկավար էր, այլև հոգևոր մայր. նա ունակ էր յուրաքանչյուրին հասկանալու անհատապես, հնարավորության դեպքում օգնել ինչով կարող է՝ խոսքով թե՛ գործով: Մտահոգվում էր նրանց կյանքով, ուրախանում հաջողություններով. գիտեր՝ ով որտեղ է աշխատում, ինչով է զբաղված, ինչ հոգսեր ունի:*

*Իր ասելով, նման հոգատարությունը նա ժառանգել էր իր սիրելի ուսուցչից՝ Լենինգրադի (ներկայումս՝ Սանկտ Պետերբուրգ) կոնսերվատորիայի պրոֆեսոր Քրիստափոր Ստեփանի Քուշնարյանից, որի նկատմամբ տածում էր մեծագույն հարգանքի, ակնածանքի ու երախտագիտության զգացումներ: Ինքն էլ իր հերթին մանկավարժական երկար ու ձիգ տարիների ընթացքում կիրառում էր այն ամենն, ինչ սովորել ու ժառանգել էր իր մեծերից:*

*Երկար տարիներ Մարգո Բրուտյանը փայփայում էր ֆոլկլորի ինստիտուտ ստեղծելու նպատակը. շատ իրավասու պաշտոնյաների դռներ թակեց, սակայն խորհրդային տարիներին նման երազանքն իրոք երազանք էր: Ես առավել քան վստահ եմ, որ այսօր նա անչափ երջանիկ կլիներ՝ տեսնելով Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գոյությունն ու բեղուն գործունեությունը.*

*Ըստ էության նա հենց սրա՛ մասին էր երազում:*

***Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Երևան***

***Komitas Museum-Institute, Yerevan***

***Музей-институт Комитаса, Ереван***

*Հատկապես կյանքի վերջին՝ հիվանդ տարիներին հաճախ էր ինձ հետ կիսվում, հետաքրքիր հիշողություններ պատմում իր կյանքից, զավեշտական դեպքեր իր բազմաթիվ ճամփորդություններից… Գիտեր, որ իր մասին գիրք եմ գրում*, թվում էր թե չէր ուզում, բայց զգում էի, որ ներքուստ ուրախ է, չէ որ իր արած գործն ինչ որ չափով կլուսաբանվի:*

* Կիրակոսյան Ա., Մարգարիտ Բրուայան. - Նյութեր կենսամատենագրության: Երևան, 2000, 2007:

## ԵՊԿ երախտավորները

*Ա. Ա. Կիրակոսյան, Թ. Գ. Պողոսյան, Մ. Ա. Բրուտյան, Ա. Ա. Փահլևանյան, Մ. Գ. Շահինյան, (1995 թ.)*

*A. A.Kirakosyan, T. G. Poghosyan, M.A. Brutyan, A. A. Pakhlevanyan, M.G. Shaginyan (1995)*

*А. А. Киракосян, Т. Г. Погосян, М.А. Брутян, А.А. Пахлеванян, М. Г.Шагинян (1995)*

*Ա. Գ. Ոսկանյան, Ա. Ա. Կիրակոսյան, Մ. Ա. Բրուտյան (1996 թ.)*

*A. G. Voskanyan, A. A. Kirakosyan, M. A. Brutyan (1996)*

*А. Г. Восканян, А. А. Киракосян, М^.Брутян (1996)*

*Քրիստափոր Ստեփանի Քուշնարյան*

*Christophor Stepan Kushnaryan*

*Христофор Степанович Кушнарян*

*Մարգարիտ Արամի Բրուտյան*

*Margarit Aram Brutyan*

*Маргарит Арамовна Брутян*

*Արդեն երկար տարիներ (քսան տարի) մեզ հետ չէ մեր սիրելի ուսուցիչը… Ժամանակն առաջ է գնում, բայց մենք շարունակում ենք կարոտել ու փնտրել նրան, ուզում ենք լսել նրա մասնագիտական ու մայրական խորհուրդները, հետաքրքիր մտքերը, տեսնել նրա բարի ժպիտն ու սևեռուն հայացքը: Կարծում եմ՝ դեռ երկար պիտի զգանք նրա կարիքը: Թեպետ խորագիտությամբ ու հեռատեսորեն նա կրթեց ու պատրաստեց հետևորդներ, գործին նվիրված շարունակողներ, այնուամենայնիվ Ի՛ր տեղն այդ բնագավառում «մնաց թափուր»:*

*Վերջում ուզում եմ անպայման ավելացնել, որ Մարգո Արամովնան, չնայած երիտասարդ տարիների բազում դժվարություններին, 1937 թվականի հետևանքով կրած ծանր ապրումներին, նա ուրախ անձնավորություն էր: Ամեն առիթով սիրում էր բոլորին հավաքել իր շուրջը, հյուրասիրել: Իր Գոհար մայրիկից ժառանգած գյումրեցու «հիվանդագին» հյուրասիրությունը փոխանցվել էր նաև իրեն, իրենից էլ՝ զավակներին ու թոռներին: Մարգո Արամովնայի և նրա կյանքի հավատարիմ ընկերոջ Հայաստանի արդյունաբերության բնագավառի առաջատար մասնագետ, հմուտ ինժեներ Հրաչյա Եղիշեի Առուստամյանի օջախը միշտ բաց էր հյուրերի առջև. Մի առիթով ես գրել էի, որ «ոչ ոք դուրս չէր գա այդ տնից՝ առանց սեղանի աղն ու հացը համտեսելու»*:*

*Մարգարիտ Արամի Բրուտյան, Մարգարիտ Արամի Ոսկանյան (Մարգո Արամովնայի վերջին լուսանկարը, 2002 թ.)*

*Margarit Aram Brutyan, Margarit Aram Voskanyan (The last photo of Margo Aram Brutyan, 2002)*

*Маргарит Арамовна Брутян, Маргарит Арамовна Восканян (последнее фото М.Брутян), 2002*

*Հեղինակի մասին տե՛ս էջ 27:*
*About the author, go to 27.*
*Об авторе, см.: стр. 28.*

* Կիրակոսյան Ա., Գյումրվա հայտնի գերդաստանի արժանի հետևորդը՝ Մարգարիտ Արամի Բրուտյան (1922-2002) 100-ամյակին ընդառաջ: «Երաժշտական Հայաստան», N 2 (50) 2022, էջ 9: